ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Մեսրոպ Վարդանի Սահակյանի «ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ատենախոսության մասին՝ «Ճարտարաետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ԺԸ.00.01՝ «Ճաարտարապետություն» մասնագիտությամբ։

Մեսրոպ Սահակյանի Երևանի փոքր կենտրոնի վերաարժևորման գեղագիտական խնդիրներին նվիրված ատենախոսությունը կարող է գնահատվել որպես հրատապ անհրաժեշտություն ներկայացնող աշխատանք՝ թե՛ որպես քաղաքի ճարտարապետությանը վերաբերող գիտական ուսումնասիրություն, թե՛ քաղաքի կենտրոնի հուշարձանների պահպանությանը և պատշաճ ներկայացմանն ուղղված ձեռնակ, թե՛ զբոսաշրջության զարգացման հեռանկարների դիտարկում։ Փոքր կենտրոնի վերաարժևորման խնդիրներն այսօր արդիական նշանակություն ունեն, քանի որ ներառում են իրենց մեջ բազմաթիվ հարցեր՝ այդ թվում գեղագիտական, որոնք ցանկալի է ներկայացնել նորովի՝ որպես ծրագիր, և հեղինակը կատարում է դա ամբողջական՝ համալիր ձևով, վերանայելով և վերակենդանացնելով քաղաքի այս հատվածի ճարտարապետական, հորինվածքային և գործառութային արժեքները մի միասնական գաղափարի միջոցով։ Դա փաստորեն քաղաքի պատմական մասի արժեքների վերանայման և օգտագործման ծրագիր է, որը կոչված է բերելու դրա վերազարթոնքին ու վերակենդանացմանը։

Թեմայի կարևորությունը կրկնապատկվում է այն հանգամանքով, որ հեղինակն անդրադարձ է կատարում ոչ միայն կարևոր հուշարձանների վերականգնմանը, դիտարժան վայրերի և շենքերի վերակառուցմանը և արդիականացմանը, այլև վերջին տարիներին քաղաքի և կենտրոնի զարգացման համար իրականացված տարբեր պետական և տեղական ինքնավարության ծրագրային, օրենսդրական և նախագծային գործունեությանը ու փաստաթղթերի մշակմանը: Մանրամասնորեն ուսումնասիրելով տարբեր թվականներին ընդունված օրենքները, ինչպես և Երևանի 2005 թ. գլխավոր հատակագծը, քաղաքի կենտրոնի գոտեվորման և կառուցապատման նախագիծը և այլ փաստաթղթեր, հեղինակն անդրադառնում է կենտրոնի զարգացման ուղղությամբ կատարված ծրագրերին, որոնցից են «Հին Երևան», «Երևանի 2800-ամյակի այգի», «33-րդ թաղամաս», Կոնդի վերակառուցման նախագծերը, Հյուսիսային և Գլխավոր պողոտաների կառուցումը, Կասկադի զարգացման շարունակությունը, քաղաքապետարանի և այլ շենքերի վերջնական ձևավորման և շինարարության ավարտը և այլն: Այս հարցերն էլ ավելի ակտուալ են դառնում նոր ճարտարապետական կառույցների առկայության պայմաններում, քանի որ առաջ է գալիս ևս մի կարևոր խնդիր՝ նոր համալիրների ներգծվումը գոյություն ունեցող միջավայր, ինչպես և պատմական շենքերի վերականգնումը և դրանց համապատասխանեցումը արդի պահանջներին:

Այս բոլոր հարցերի լուծման ճանապարհին հեղինակը արդարացիորեն գտնում է, որ պետք է ուսումնասիրել և ներկայացնել այլ երկրների արդի փորձը, ինչպես և Հայաստանում կատարված բոլոր աշխատանքները, ինչը և բարեխղճորեն և մանրամասնորեն անում է: Սակայն նա ազնվորեն նշում է, որ ողջ արվածի հետ մեկտեղ Երևանի «Փոքր

կենտրոնի» արդի այս կարևոր խնդիրները գործնականում պատշաճ մակարդակով դեռևս լուծված չեն: Ատենախոսը գտնում է, որ դա կապված է ներկայացվող խնդիրներին միասնական մոտեցման, այն է՝ գոյություն ունեցող միջավայրի գեղագիտական որակի համալիր գնահատման, դրանց վիճակի բարելավման և այլ հրատապ հարցերի հետ:

Նշված հարցերին Մ. Սահակյանը ցույց է տալիս հայեցակարգային մոտեցում, միջավայրի կազմակերպման համար անհրաժեշտ և նպատակային միջոցառումների իրականացման առաջարկություններ է անում:

Ատենախոսության **նպատակն** է վերլուծական քննության միջոցով ներկայացնել Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարպետական միջավայրի արդի խնդիրները և մի շարք առաջարկություններ անել դրանց վերարժևորման ու գեղագիտական որակի բարելավման վերաբերյալ: Ատենախոսը մշակել է այս նպատակի իրագործմանը ուղղված հիմնական ուղիները. դրա ընթացքում կատարել է խոշոր քաղաքների կենտրոնների ճարտարապետատարածական զարգացման և վերարժևորման գեղագիտական խնդիրների լուծման արտասահմանյան փորձի վերլուծությունը, Երևանի «Փոքր կենտրոնի» և պատմական միջավայրի տարբեր փուլերում զարգացման պայմանների և ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետահատակագծային զարգացման ընթացքում գեղագիտական որակի վերարժևորման հիմնական սկզբունքների և օրինաչափությունների բացահայտումը, Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական զարգացման և գեղագիտական որակի բարելավման վերարժևորման հիմնական համալիր ուղիների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Նշված խնդիրների լուծման ուղիների ռազմավարության մշակումն ու ծրագրերի իրագործման ճանապարհների առաջարկությունները Մեսրոպ Սահակյանի աշխատությունը դարձնում են միանգամայն իրատեսական, անհրաժեշտ և նույնիսկ իրականացում պահանջող: Դրանով էլ պայմանավորվում են ատենախոսության թեմայի **արդիականությունը** և կարևորությունը:

Ատենախոսության մեջ բարձրացված հիմնախնդիրները բավականին լայն ընդգրկում ունեն՝ ներառած ճարտարապետության պատմությունը, այլ երկրների փորձի հետ համեմատական վերլուծությունը, սեփական մեթոդների մշակումը և ներկայացումը, համապատասխան գրականության ուսումնասիրությունը: Այս կարևոր խնդիրները ատենախոսը լուծել է հաջողությամբ:

Հեղինակի կողմից մանրամասն ուսումնասիրված են ատենախոսությունում ներկայացված հիմնավորումների հիմքում ընկած բոլոր **գիտական դրույթները**, որոնք ճիշտ են ու համոզիչ, իսկ **հիմնավորման աստիճանն** ունի պատշաճ մասնագիտական մակարդակ:

Վերը նշված բոլոր տվյալները, առաջարկները, համոզիչ եզրակացությունները և հանձնարարականները, անշուշտ, ներկայացնում են ակնհայտ **գիտական նորույթ**: Իսկ ստացված արդյունքները, անկասկած, **կարևորություն** են ներկայացնում ճարտարապետական գիտության համար: Կատարված ուսումնասիրության **գիտական նորույթը** կայանում է հետևյալում.

1. Աշխատությունում առաջին անգամ առանձնացվել են Երևանի «Փոքր կենտրոնի» արդի իրավիճակում վերարժևորման հիմնական ուղղությունները,

2. Բացահայտվել են «Փոքր կենտրոնի» ճարտարապետահատակագծային զարգացման ընթացքում վերարժեորման վրա ազդող հիմնական գործոնները, դրա սկզբունքները և օրինաչափությունները,

3. Մշակվել են «Փոքր կենտրոնի» բազմագործոն վերլուծության **մեթոդաբանությունը**, ինչի հիման վրա՝ վերարժեորման համալիր սկզբունքների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել:

Հետազոտության **մեթոդաբանությունը** կայանում է մասնագիտական գրականության և արխիվային նյութերի, փաստաթղթերի, իրականացված և չիրականացված նախագծերի, քաղաքային ծրագրերի հավաքագրման և ամփոփման, համակարգային մոտեցման, համեմատական, իրավիճակային վերլուծությունների մեջ: Մեթոդաբանությունը իր հերթին բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից. վերարժեորման օբյեկտների բացահայտում, վերարժեորման օբյեկտների գնահատում և արժեորում, բազմագործոն գնահատում և իրավիճակային վերլուծություն, որի արդյունքում՝ վերարժեորում:

Կարևոր է, որ «Փոքր կենտրոնի» վերարժեորման մեթոդաբանության օրինակը կիրառելի է այլ քաղաքների կամ դրանց առանձին հատվածների համար:

Իր ուսումնասիրություններում ատենախոսը միասնական հայեցակարգային մոտեցում է ցուցաբերում դիտարկվող խնդիրներին և դրանց լուծմանը:

Ատենախոսության կառուցվածքը.

Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք: Այն կազմված է 135 էջ տեքստային մասից և հավելվածներից: Տեքստային մասը ներառում է

ներածություն, երեք գլուխ, եզրակացություն և 102 անուն օգտագործված գրականության ցանկ:

Ատենախոսության սեղմագրում 22 էջի սահմաններում հայերեն շարադրված են աշխատության հիմնական դրույթները: Սեղմագրում ներկայացված են նաև տեքստի ռուսերեն և անգլերեն համառոտագրությունները, ինչպես և հեղինակի գիտական հրապարակումների 8 անունից բաղկացած ցանկը:

Ատենախոսության ներածության մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը իրենից ներկայացնում է այլ երկրներում քաղաքների ճարտարապետատարածական զարգացման ուղիների և վերարժևորման գոյություն ունեցող փորձի ուսումնասիրությունը: Այստեղ հետազոտված է վերարժևորման, օբյեկտների վերականգնման և վերակառուցման իմաստն ու նշանակությունը՝ որպես ճարտարապետական, հորինվածքային և գործառութային արժեքների վերակենդանացմանն ուղղված գործընթաց և միջավայրի ներդաշնակության ստեղծման երաշխիք: Ատենախոսությունում առանձնեցված են յուրաքանչյուր տարածքի կամ օբյեկտի գեղագիտական որակի վերարժևորման արժեքի չորս հիմնական բաղադրիչները. վավերականություն, պատմական, արտաքին և ավելացված արժեքները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** նվիրված է Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» դիմագծի ձևավորման և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունների վերլուծությանը: Հեղինակը

մանրամասնորեն անդրադարձ է կատարում Երևանի կենտրոնի և պատմական միջավայրի զարգացման պայմանների ուսումնասիրության ընթացքում գեղագիտական կերպարի կերտման և խնդիրների լուծման առանձնահատկություններին՝ ժամանակագրական տեսակետից քաղաքի զարգացման տարբեր փուլերում: Աշխատությունում հատուկ տեղ է գրավում Ալեքսանդր Թամանյանի կողմից 1924 թ. կազմած Երևանի գլխավոր հատակագծի կազմավորման հիմնական գործոնները և միջավայրի գեղագիտական արտահայտչականության առանձնահատկությունները:

Ատենախոսության **3-րդ գլխում** դիտարկված են ճարտարապետահատակագծային միջավայրի վերարժեորման ուղիները և գեղագիտական խնդիրների լուծման հիմնական սկզբունքները: Հեղինակը ներկայացնում է Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման ներկայիս իրավիճակը՝ ժամանակակից միջազգային փորձի համեմատական վերլուծության հիման վրա: Այդպիսով մշակվում և առաջադրվում է ճարտարապետական միջավարի գեղագիտական որակի համալիր վերարժեորման մեթոդաբանությունը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել վերարժեորման հիմնական սկզբունքները, չափանիշները և ուղղությունները՝ կախված միջավայրի առանձնահատկություններից:

Ատենախոսության հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական միջավայրի արդիականացման առավել ուշագրավ նախագծային և ծրագրային առաջարկություններին, որոնց թվում՝ «Հին Երևանը», «33-րդ թաղամասը», «Կոնդ թաղամասի վերաբերյալ առաջարկները»: Նշված նախագծերը դիտարկված են իրենց բոլոր առանձնահատկություններով: Աշխատության

այս հատվածում բացահայտված է նաև քաղաքային լանդշաֆտին վերաբերող վերարժևորման ենթակա օբյեկտների համակարգը: Հատուկ արժեք է ներկայացվում հեղինակի կողմից կատարված օբյեկտների դասակարգումը՝ ըստ բացահայտված պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի՝ ուղիների, եզրագծերի, շրջանների, հանգույցների, կողմնորոշող օբյեկտների: Հեղինակի աչքից չի վրիպել նաև տարածքի սոցիալական նշանակության գործոնը, դրա գործառույթները, պատմությունը, սեմիոտիկան:

Ատենախոսության **եզրակացություններում,** ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, հեղինակն արձանագրել է, որ ճարտարապետական միջավայրի գեղարվեստական կերպարի և դիմագծի պահպանման, ճարտարապետական, հորինվածքային և գործառութային արժեքների «վերակենդանացման» ամենաարդյունավետ ժամանակակից միջոցներից է պատմական քաղաքների կամ դրանց առանձին հատվածների վերարժևորումը: Աշխատությունում բացահայտված են Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական միջավայրի արդիականացման և վերարժևորման ներկա փուլի հիմնական պայմանները, որոնց թվում են վերակառուցումը, վերափոխումը և արդիականացումը՝ տարբեր միջոցներով: Մշակելով և ներկայացրելով ճարտարապետական միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժևորման մեթոդաբանությունը, հեղինակը ցույց է տվել, որ դրանց շնորհիվ է հնարավորություն առաջացել բացահայտելու վերարժևորման հիմնական սկզբունքները, չափանիշները և ուղղությունները՝ միջավայրի առանձնահատկություններին համապատասխան:

Հետազոտության արդյունքները հավաստի են, քանի որ հիմնավորվում են բնօրինակային ուսումնասիրությունների, քաղաքաշինական և ճարտարապետական համալիրների, մշակութային ժառանգության հետազոտության, ինչպես նաև վերարժևորման ժամանակակից փորձի և մեթոդների կիրառման առաջարկների վրա:

Հետազոտության կիրառական նշանակությունը և հետազոտության արդիականությունը: Հեղինակի ստացած արդյունքները Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական միջավայրի վերարժևորման վերաբերյալ այսօր առավել, քան հրատապ են, քանի որ բոլորիս աչքի առաջ կառուցված և կառուցվող ճարտարապետական նոր շինությունները ոչ միայն խաթարում են գոյություն ունեցող պատմական միջավայրը, այլև դրա հետ համապատասխանեցում են պահանջում: Առաջնահերթ խնդիրներից է նաև առկա շենքերի և շինությունների արդի պահանջներին հարմարեցումը, պատմական կառույցների վերականգնումը՝ հաշվի առնելով դրանց պատշաճ մակարդակի գործառութային գործունեությունը և տարածքի հատակագծային և ծավալատարածական կառուցվածքի ամբողջականության ապահովումը:

Ատենախոսությանում ներկայացված համալիր հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նյութական մշակութային ժառանգության պահպանության, հուշարձանների ամրակայման և վերականգնման նախագծերի կազմման, ինչպես նաև Երևանի Փոքր կենտրոնին վերաբերող համապատասխան պետական քաղաքակաշինական ծրագրերի ձևավորման և մշակման ժամանակ: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են ընդգրկվել նաև համապատասխան ուսումնական հաստատություններում՝ "Ճարտարապետակության պատմություն" առարկաների դասավանդման

գործընթացում: Այն կարող է նաև նպաստել պետության տնտեսական զարգացմանը, քաղաքի կենտրոնին հաղորդելով նոր կարգավիճակ ու նշանակություն:

Կուզենայինք նշել մեկ ցանկություն. հետաքրքիր կլիներ իմանալ ատենախոսության հեղինակի ավելի հստակ կարծիքը կենտրոնի զարգացման որոշ ծրագրերով նախատեսված՝ շենքերին լրացուցիչ հարկերի ավելացման և գործառույթների կտրուկ փոփոխության հետ, որոնց մասին նա նշում է: Ճիշտ է, հեղինակը հավելում է, որ այդ փոփոխությունները պատճառաբանված են անհրաժեշտ ներդրումներ ստանալու պահանջով, սակայն ցանկալը կլիներ նաև իմանալ հեղինակի դիրքորոշումը կամ առաջարկությունները դրա վերաբերյալ:

Բնականաբար, ասվածը սկզբունքային նշանակություն չունի և ամենևին չի նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ճարտարապետության թեկնածուի գիտական կոչումը հայցող ներկայացված ատենախոսությունն ավարտուն և պատշաճ մակարդակով կատարված գիտական հետազոտություն է, որը նորույթ է հանդիսանում հայ ճարտարապետական գիտության մեջ՝ հավաստի արդյունքներով հագեցած: Հեղինակի **եզրահանգումները** միանգամայն **ճիշտ են և հիմնավորված,** և նրա աշխատանքն արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության շարադրանքն ու ձևավորումը նույնպես կատարված են մասնագիտական բարձր մակարդակով: Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներն ու սեղմագիրը ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մեսրոպ Վարդանի Սահակյանի «ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, կարող է դիտարկվել որպես ներդրում հայ ճարտարապետության տեսության և պատմության բնագավառում, իսկ նրա հեղինակն արժանի է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի՝ ԺԸ.00.01 «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ:

ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի Ալ. Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի տնօրենի խորհրդական,
ճարտարապետության թեկնածու Ա. Տեր-Մինասյան

Ա. Տեր-Մինասյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ:
ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի Ալ. Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի տնօրենի տ.պ.
Ս. Գրիգորյան